

Համաձայնեցված է
Հայաստանի Հանրապետության
ֆինանսների նախարար


Վ. Գաբրիելյան
19 հունվարի 2014թ.



Հայաստանի Հանրապետության
կառավարության առընթեր պետական
եկամուտների կոմիտեի նախագահ
Գ. Խաչատրյան

Պ Ա Ր Չ Ա Բ Ա Ն ՈՒ Մ

**ՌՈՅԱԼԹԻՆԵՐԻ ԵՎ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՒՄԱՐՆԵՐԻՑ
ԵԿԱՄՏԱՀԱՐԿԻ ԵՎ ՊԱՐՏԱԴԻՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ
ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

«Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի «բ» կետում տրված է ոռոյալթի հասկացությունը, որից նույն օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն եկամտահարկը հաշվարկվում է 10% դրույքաչափով (առանց որևէ նվազեցում կատարելու), իսկ աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված եկամուտներից ու քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում կատարված աշխատանքների (մատուցված ծառայություններից) դիմաց եկամուտներից (ԱՎՈՒՄ-ից) եկամտահարկը հաշվարկվում է 10% կամ 20% դրույքաչափերով:

«Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներից և դրան հավասարեցված եկամուտներից (այդ թվում՝ քաղաքացիա-իրավական պայմանագրերի շրջանակներում կատարվող աշխատանքներից /մատուցվող ծառայություններից/) սոցիալական վճարները հաշվարկվում են ընդհանուր սահմանված կարգով:

ՀՀ կառավարության 08.06.1998թ. «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին» N 352 որոշման հավելված 1-ով հաստատված աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցների և դրանց հավասարեցված եկամուտների ցանկի 1-ին կետի «դ» ենթակետով հեղինակային վարձատրությունը (բացառությամբ՝ ոռոյալթիների) հանդիսանում է ԱՎՈՒՄ և հաշվարկվում սոցիալական վճարներ, իսկ 2-րդ և 3-րդ կետերի համաձայն քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում կատարվող աշխատանքներից, մատուցվող ծառայություններից ստացվող եկամուտները (բացառությամբ՝ գիտական և ստեղծագործական աշխատանքների դիմաց եկամուտների) հանդիսանում են ԱՎՈՒՄ և հաշվարկվում սոցիալական վճարներ:

Ըստ վերը նշված օրենսդրական դրույթների, եթե աշխատանքային կամ քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում ֆիզիկական անձի կողմից կատարվում են աշխատանքներ (մատուցվում են ծառայություններ), ապա դրանց դիմաց վճարվող եկամուտները համարվում են ԱՎՈՒՄ և եկամտահարկը ու սոցիալական վճարները հաշվարկվում են՝ կիրառելով համապատասխան դրույքաչափերը: Իսկ եթե ֆիզիկական անձի հետ կնքվել է «Հեղինակային իրավունքի

և հարակից իրավունքների մասին»» ՀՀ օրենքին համապատասխան առանձին հեղինակային պայմանագիր, որի շրջանակներում վճարված եկամուտները որակվում են որպես «ռոյալթի», ապա այդ եկամուտներից եկամտահարկը հաշվարկվում է 10% դրույքաչափով (առանց որևէ նվազեցում կատարելու) և սոցիալական վճարներ չեն հաշվարկվում (անկախ տվյալ գործատուի /հարկային գործակալի/ վարձու աշխատող լինելու կամ չլինելու հանգամանքից):

Դիտարկվող իրավիճակը հետևյալն է. «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին»» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն հեղինակային իրավունքի օբյեկտ է համարվում գրականության, գիտության և արվեստի բնագավառներում հեղինակի ինքնուրույն կամ այլ հեղինակների հետ իրականացրած ստեղծագործական աշխատանքի յուրօրինակ արդյունքը: Նույն հոդվածի 4-րդ մասի «զ» կետի համաձայն հեղինակային իրավունքի օբյեկտներ են՝ տեսալսողական ստեղծագործությունները (կինո-հեռուստաֆիլմերը, անիմացիոն և մուլտիպլիկացիոն կինոնկարները, կարճ երաժշտական տեսահոլովակները, գովազդային, փաստագրական, փաստավավերագրական և այլ ֆիլմերը): Ֆիլմերի և այլ տեսալսողական ստեղծագործությունների արտադրության համար հեռուստաընկերությունը առանձին պայմանագրեր է կնքում ստեղծագործական խմբերի մասնակիցների հետ: Ստեղծագործական խումբը ընդգրկում է սցենարի հեղինակին (հեղինակներին), ռեժիսյորներին (կամ բեմադրող ռեժիսյորներին), երաժշտության հեղինակին (հեղինակներին), տեքստ կարդացողներին, բեմադրող օպերատորներին և դերասաններին, ինչպես նաև ֆիլմի տնօրենին և տեխնիկական անձնակազմին (օպերատորներ, տեխնիկներ, լուսավորողներ, դիզայներներ, մոնտաժիկներ, վարորդներ): Նկարահանումից հետո ֆիլմը կարող է պատկանել հեռուստաընկերությանը և/կամ ստեղծագործական խմբի մասնակիցներին, իսկ ստեղծագործական խմբի մասնակիցներին վարձատրությունը կարող է տրվել պարբերաբար՝ ֆիլմի նկարահանման համար և/կամ կախված լինել ֆիլմի հետագա օգտագործումից ստացված եկամուտներից:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 29.07.2010թ. N 1007-Ն որոշմամբ հաստատված «Հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի դրույթների վերաբերյալ պարզաբանումների տրամադրման» կարգի 6-րդ կետի 2-րդ ենթակետով, **պարզաբանում են.**

1) ֆիլմի նկարահանման համար ստեղծագործական խմբի մասնակիցների (սցենարի հեղինակ /հեղինակներ/, ռեժիսյորներ /կամ բեմադրող ռեժիսյորներ/, երաժշտության հեղինակ /հեղինակներ/, տեքստ կարդացողներ, բեմադրող օպերատորներ, դերասաններ) ստացած վարձատրությունը հանդիսանում է ԱՎՈՒՄ, իսկ եթե նրանց հետ կնքված պայմանագրով (պայմանագրերով) նախատեսվում է, որ նկարահանված ֆիլմը պատկանում է նրանց և նրանք ստանում են եկամուտներ ֆիլմի հետագա օգտագործումից, ապա այդ եկամուտները հանդիսանում են ռոյալթի.

2) ֆիլմի տնօրենի և տեխնիկական անձնակազմի վարձատրությունը համարվում է ԱՎՈՒՄ: